

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍ ԳԻՒՍԱՐԱՆ

ՀՈՅՈՐ ԽԴ. ՊՐԱԿ Դ.

1886

ՀՈԿՏ. ՆՈՅԵՄԲ. ԴԵԿԸ.

### ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՆ ԱՐՁԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ ՄԻ



ին Քերսոնէս քազաքի (Տաւրիոյ) արձանագիր մի՛ ի պատիւ և՛ վարձատրութիւն Դիմոֆանդոսոս զօրավարին Միհըրդատայ Եւպատորի, վասն նուաճելց զԴրիմ և ազատելց զՔերառնացիս՝ ի գառն

լծոյ գերութեան աղջին Սկիւթացւոց :

Սյս վերնագրով կը սկսի Օտեսսայի հնախոյց ընկերութեան յիշատակարանաց ժի հատորը, որ տպագրուած է 1881ին։ Սեւաստոպոլ քաղաքին մատերը, նախաքրիստոսեան հին Քերսոնէս քաղաքին տեղը, որ մինչև ի 1877 հողի տակ ծածկուած էր, վերյիշեալ ընկերութեան խնամք, դարաւոր հողը և փոշին մէկդի առնելով շատ հնութիւն

յերեան եկան. այլ 1878ին գտնուած արձանագրութիւնն՝ լիապէս վարձատրեց հնախութից աշխատութիւնը : Կրկին մասամբ յարգի և պատուական է այն. մին՝ զի Մսեծին Միհըրդատայ պատերազմաց ժամանակագրութեան մասին որոշ տեղեկութիւնք կ'ընծայէ . Երկրորդ՝ Ղրիմու հին քաղաքաց և բերդորելից մասին՝ այլ և այլ կարծիք կը պարզին . այս արձանագրութիւնն՝ Ըսկիւթացւոց աշխարհը ոչ ՚ի հեռաւոր հիւսիսի կը գնէ, այլ ՚ի կեզրոնի Տաւրիական թերակղզւոյն . որով հին պատմագրաց միթին կարծուած տեղուանք կը պարզին . Հայկական հայեացքով ևս նշանաւոր է արձանագրութիւնն . որ թէ պէտ և ոչ բուն Հայաստանի պատմութիւնը կը լուսաբանէ և ոչ Հայոց քաջագործութիւնք, սակայն այն քաջն՝ որոյ պատերազմունքը եւ յաղթութիւնքը կ'արձանագրէ, մերձաւոր և ազգակից

Գրաւ Դ.

19

եղած է Հայաստանի, փեսայանալով  
մերս քաջին Տիգրանայ<sup>1</sup>, և նորա Քոյրը  
իրեն թագակից ունենալով (ըստ այլոց,  
իւրդուստրը Տիգրանայ հարսնացնելով)  
արիած է Քրիստոսէ 441 կամ 442 տա-  
րի առաջ, առաջին անդամ՝ Տաւրիոյ  
կղզւոյն, ինչպէս որ կ'աւանդէ մեղ ար-  
ձանագրութիւնս:

Յոյն լեզուով գրեալ է արձանագրու-  
թիւնս՝ մարմարին մի մեղր երկայնու-  
թեամբ քարի վրայ փորագրուած, երկու  
սինակ բաժնուած, իւրաքանչիւր սիւ-  
նակին մէջ քսանութեական տող. քարին  
ստուարութիւնը <sup>3/10</sup> մեդրի: Այս քարը  
ժամանակաւ պղնճածոյլ արձանի ոտից  
պատուանդան եղած է, ուր կ'երեսն  
ցարդ հետքերը կամ ոտից տեղերը:  
Քարս երկու կտոր բաժնուած գտնուե-  
ցաւ. որ անշուշտ ժամանակ վրայ անց-  
նելով, իւրբեն նիւթ շինուածոյ գործա-  
ծուած է. այդ պատճառաւ ևս սկզբան  
և վերջի քանի մի բառք կը պակասին,  
նոյնպէս և վերէն շատ տառեր մայուած  
աւրուած են. բայց և այնպէս քաջ հել-  
լենագէտք կարգացին և ծանօթացուցին  
եւրոպայի<sup>2</sup> այս հնաւանդ յիշատակա-  
րանը և ընդունեցան մեծամեծ չնորհա-  
կալութիւնք: Մեք կը թարգմանեմք  
զգուշութեամբ բազմահմուտ Վ. Իւր-  
դիւչ ուսուցի ոռու թարգմանութեան  
վրայէն, համառօտելով քանի մի ծանօ-  
թութիւնք նոյն հեղինակին: Աւելի ճշ-  
տութեան համար ընտրեցինք գրաքառ  
լեզուն:

• . . . . « Քանզի Դիոփանդոս,  
որդի Ասկլապիոդորի ՚ի Սինորայ<sup>2</sup>, քա-  
րեկամ և բարերար, զոր համարէաք  
միամտութեամբ լինել առ մեղ, ոչ նը-  
ւազ յայլմէ ումեքէ եղի պատճառ բա-  
րեաց վասն ամենեցուն մեղ, ՚ի կողմա-  
նէ արքային Միհրդատայ Եւպատորի,  
միտելով զարքայ ՚ի գեղեցկագոյն և ՚ի

փառաւորագոյն գործս: Նա կուեցեալ  
յարքայէ և սունձնեալ պատերազմել  
ընդ Սկիւթացիս, եկն ՚ի մեր քաղաք, և  
աստի ամենայն զօրգք իւրովք էանց քա-  
ջապէս ընդ ծով. և յորժամ՝ Պալակ  
թագաւորն Սկիւթացոց՝ յարձակեցաւ  
յեղակարծ զօրու ժանու ՚ի վերայ նորա,  
նա մարտ եղեալ ընդ նմա խորտակեաց  
զՍկիւթացիս, որք ցայն վայր անյաղ-  
թելիս համարեալ էին. որով Միհրդատ  
Եւպատոր արքայ, նախ քան զամենայն  
ո՞ւ կանգնեաց զյաղմանակ մարտին  
ընդդէմ նոցա: Յետոյ նուաճեալ զըլը-  
ջակայ Տաւրիացիս <sup>3</sup>, հիմն արկ անդանօր  
քաղաքի. չուեալ ՚ի շրջակայս վոսիորի,  
և ՚ի սուղ ժամանակի ՚ի զլուկի տարեալ  
բազում զործս նշանաւորս, դարձաւ  
այսրէն. և առեալ ընդ իւր զերիտա-  
սարդ քաղաքացիս (Քերսոնացիս) խա-  
ղաց ՚ի խորս Սկիւթիոյ, և տիրեալ եր-  
կուց արքունական ամբոցաց Խավայի և  
Նէապօլի<sup>4</sup>, որք եղեն նմա ընդ լծով,  
նուաճեաց գրեաթէ և զհամօրէն Սկիւ-  
թացիս ընդ իշխանութեամբ Միհրդա-  
տայ Եւպատոր արքայի: Վասն այսորիկ  
ազգս մեր, ազատացեալ յայնմ ժամա-  
նակէ ՚ի բունց Բարբարոսաց, ՚ի չնոր-  
հակալութիւն պատուեաց զնա պար-  
տուպատշաճ յարդանօր:

Սակայն Սկիւթացիք զբնածին ուխ-  
տագրծութիւն իւրեանց այնու յայտ  
արարին, զի զլուկի ամբանալով՝ ՚ի  
բաց վտարանչեցին յարքայէ, և զայլ  
կերպարանս ետուն գործոցն. վասն այ-  
նըր պատճառի՝ և Գիոփանդոս, ընդ  
արքունական զօրուն Միհրդատայ Եւ-  
պատորի, խառնելով և զնախամեծարս  
՚ի մեր քաղաքէ, ՚ի ձմեռնացեալ ժամա-  
նակի, դիմեաց ՚ի վերայ նախասացեալ  
Սկիւթական ամրոցաց. այլ արդելեալ  
՚ի գծնզագութենէ օդոց, դարձան ՚ի  
ծովափնեսայ տեղիս: Տիրեաց կիրկի-

1 Խորենացի. Միթակ պատճառը թիւն. Գլ. Ճ.:

2 Մայոքապաք Միհրդատայ Եւպատորի ՚ի  
Պալականացուցոց աշխարհն: Ղրիմու արքելէն  
առաջ, ուր ուներ մեծաչէն ապարանք:

3 Ղրիմու լեռնցիները, որք յայլոց կոչուած  
են Տաւրո-Միհրդացիք կամ Սկիւթացիք Տաւ-

րեց, և նոցա թագաւորն Սկիւթացոց արքայ:

4 Երեւան Սկիւթացի հին բերդեր Քերսոնիսէ  
դէպ ՚ի Միհրդատուն անապարհն վրայ. Վեր-  
ջնը շատ մօս եղած է Սկիւթացուն Սալզը  
գետայն մի Թումբին վրայ շինուած:

նիսայ և և բերդորէիցն, և զիմեաց պաշարել զրնակիչս գալոս-լիմէնի. և ընդ այն զմտաւ ածեալ՝ թէ յարմարադոյն է ժամանակն ընդ ծով գնալց, ժողովնեաց զամենայն զօրականն, և 'ի վերայ այնր՝ յինքն ձգեաց ևս և զիոկ ինսկիլեանց<sup>2</sup>, կուսական աստուածուին Քերսոնացւոց, որ յամենայն ժամանակի պաշտպան էր նմա, յայս նուագ ևս գործակից գտաւ, նախագուշակ լինելով յաջողութեանց մարտին սքանչելոք 'ի տաճարին. որով արիացեալ քաջացաւ զօրականն, և Դիուֆանդու իմաստութեամբ կարգաւորեալ զնովին, մեծամեծ յաղթութիւնք կատարեցան 'ի փառու Միհրդատայ իւղապատրի, հոչակաւոր ընդ համօրէն ժամանակս. զի 'ի հետևակազօրացն թշնամեաց ոչ ոք կարաց ապրել, այլ 'ի հեծելոց յոյժ սակաւք ոմանք: Յետ այսորիկ ոչ ժամանակառ լինելով, առեալ ընդ իւր (Դիուփանդու) 'ի քաղաքացեաց, 'իրանալ զրանց դարնայնոյն, խաղաց 'ի վերայ ամրոցացն խավայիք և նէապօլի և զթշնամին 'ի փախուստ նեպեցոց. ընդ այն գիտացեալ եթէ մազապուրծ Սկիւթայլք խորհուրդ 'ի մէջ առեալ խորհին զանձանց իւրեանց, չու արարեալ անտի գնաց 'ի սահմանը. Վոստորի, և անդ զամենայն ինչ կարգաւորեալ վճարեաց վայելապէս յօդուտ արգային Միհրդատայ իւղատորի: Թէ Յետ որոյ յորժամ Սկիւթայլք, 'ի գլուխ իւրեանց ունելով զվավմակ, արարին յեղափոխութիւն ընտանի, մատն եղեալ արբային վոստորի Պէրիստադայ, որ երբեմն դասախարակ կացեալ էր Սավմակայ, դարան նմա գործելով, Դիուփանդոսի ասեսեալ զյայտնի փանզըն, ել 'ի նաւ զոր առաքեալ էին նմա քաղաքացիքս (մեր), և հասեալ ('ի Քերսոնէս) քաջալերեաց քքաղաքացիս:

Ունելով յօժարակամ գործակցու-

1 Հին բերդաքաղաքներ Ան ծովուն ափանց վրայ, ընդ մէջ Նւպատորիայ և Անաստոպովի:

2 Հին ժողովուրդ մի, թէրակողքէն դուրս, Դոն գետին եղերաց վրայ:

3 Քաղաք է քաղնաց առ հինս. այժմ Կերէ

թիւն 'ի կողմանէ Միհրդատայ իւպատորի, որ և առաքեացն զնա, եկեալ առ մեզ 'ի մուտս գարնան՝ ցամաքային և ծովային զօրու, և յաւելեալ յիւրսն գքաջընտիրս 'ի քաղաքացեաց մերոց, յերիս յարշաւամն որ աստի, տիրեաց թէողոսիոյ և Պանտիկապէէի<sup>3</sup>, պատուհասակոծ արար զհաւակս ապստամբացն, և առեալ զվավմակ, յոյր ձեռն սպանեալ էր Պէրիսադ, առաքեաց 'ի գահ: — Եւ քանզի Դիուփանդոս՝ առնելով այսպիսի գործս վասն Միհրդատայ իւպատոր արբայի, գործակից գտաւ և օգտաւէս գերանացւոց, ցուցանելով նուիրակացն առաքելոց յազգէ մերմէ, զյօժարակամ ձեռնտութիւնն, արդ՝ որպէս զի յայտնի լիցի թէ ազգս մեր հատուցանէ զպարսու շնորհակալութեան առ բարերարս իւր, ծերակյունն և ժողովուրդն՝ սահմանեցին զնել 'ի զըլուս Դիուփանդոսի, որդւոյ Ասկլապիոդորի, պսակ ոսկի 'ի պահու հանդիսաւոր թափորին, 'ի տօնի Պարթենեայ, հոչակելով 'ի ձեռն վերակացուաց թէ Ալզդս վարձահատոյց լինի պսակաւ՝ Դիուփանդոսի, որդւոյ Ասկլապիոդորի, որ 'ի Սինորայ, վասն քաջագործութեանցն և բարեկամութեան առ ազգս մեր»: բաց աստի՝ կանգնել նմու և արձան պղնձի, զինավուեալ տարազու յակրտոցիին<sup>4</sup>, մերձ առ բազինս կուսական աստուածուինն և վերսոնիսեայ: Զհոր գործոյս յանձնն առնելով պաշտօնէիցն 'ի ստորի նշանակելոց, պատուէր 'ի վերայ զնելով վաղաղակի 'ի զըլուս տանել զգործն ամենայն խնամով. զարձանազրութիւնս զայս փորազբել 'ի վերայ պատուանդանի արձանին, և զարձաթն 'ի ծախս տալ (հրամայեմք) գանձապետաց տաճարական գումարին: Որոշեցաւ կարգադրութիւնս 'ի ձեռն ծերակուտին և ազգիս՝ յիննետառն ամսեան Դինիսեայ<sup>5</sup>, առ արխոնդ արբայիւ

4 Հինարերդ կամ բարձրաբերդ:

5 Ըստ Բիւթանական տումարի, որ կը համապատասխանէ Դյանուարի նորոյ տումարին:

Ագելեաւ, որդւոյ Ա... որինա, առ նաւ խազահութեամբ ծերակուտափն Մինիոսի, որդւոյ Հերակլեայ. և քարտուղարիւ Դ... որդւոյ Աթենէսոփ :

Արձանագրութեանս մէջ յիշատա. կուած պատերազմական գէպքերը կը լուսարաննեն Միհրդատայ Դէ ընդէմ Սկիւթացւոց ազգին ըրած արշաւանաց պատմութիւնը, որ պիտի համկընանք ծաւրիական թերակղղոյն ներքնա. կողմը, որոյ և ամբովապէս տիրած է Միհրդատ : Սկիւթական աշխարհին հե. ռաւորութիւնն էր պատճառ՝ որով հին պատմագրաց ոնով գրութիւնը Միհրդատայ պատերազմաց մասին մեզի մժին կ'երևային :

Ըստ Մտրաբոնի՝ Քերասոնացիք ՚ի Սկիւթացւոց կործ անման փաննդի մէջ լի. նելրվ, Միհրդատայ Եւպատորի պաշտ. պանութեան դիմած են . որ և ստանձնած է անուն ընդհանուր զօրավարի ընդդէմ Բարբարոսաց . և այդ զօրավարութիւնը նախապատրաստութիւն մի եղած է նմա Հռովմայեցւոց գէմ տայու պատերազմաց : Միհրդատ զօրք զրկելով Քերսոնացւոց պաշտպանութեան, ինքն կը պատերազմի Սկիլուր Սկիւթացւոյն և նորա որդւոց հետ, որք Փա. լակ թագաւորին զրոշուց տակ, մարտ մղած են Եւպատորի գէմ . որոց յաղ. թերվ Միհրդատ, իւր իշխանութիւնը տարածած է նոյնպէս զոսփորի թագաւորութեան վրայ. զի նոցա թագաւորն Պէրիսադի կը յանձնէ իւր իշխանութիւնը (Մտրաբոն, է. 3) :

Նորադիւտ արձանագրութիւնն երեք դրիմեան պատերազմունք կը յիշատա. կէ, զոր վարած է Դիոփանդոս Միհրդատայ հրամանաւ, որոց առաջնոյն մէջ կը յաղթէ Պալակի՝ Սկիւթացւոց թագաւորին : Եւ այս առաջին պատերազմը Քերսոնացւոց պաշտպանութիւն ընելու համար է, յորում Դիոփանդոս կոտրելով Սկիւթական բոնութիւնը կը տիրէ նոցա աշխարհին, զոր համկընալու է Պրիմու թերակղղոյն ներքին մասերը : Բատ արձանագրութեանս ան. պարտելի համարուած Սկիւթական

ազգն, առաջին անդամ պարտութիւն կը խոստովանի Միհրդատայ Եւպա. տորի Դիոփանդոս զօրավարին առաջնոր եկած է ՚ի Պրիմ զիթերսոնացիս պաշտ. պաննելու : Մյոն միջնորին Պէրիսադ Վոս. փորի թագաւորն յօժարակամ կ'ընդու. նի իւր վրայ Միհրդատայ յիշխանութիւ. նը . արձանագրութիւնս համաձայն է Մտրաբոնի հետ :

Միհրդատ ծնած է՝ ըստ վկայութեան Մէյերի և այլոց, մեր այժմեան թուա. կանէն 431 տարի առաջ : Պրիմեան ա. ռաջին պատերազմն չատ առաջ եղած է քան զնուվմէականները, զի նորավարժ իրաց պատերազմի կը վկայեն լինել պատմագրիք յայնժամ զլիմիհրդատ . զի 83 Ն. Ք. թուականին սկսած են Հռովմէական պատերազմունք : Պելնի. դէս՝ Միհրդատայ գեսպանն՝ առ Հռով. մայեցի հիւպատոսն յԱսիա, նկարա. զրելով իւր թագաւորին զօրութիւնը կ'ըսէ .

«Նորա (այսինքն Միհրդատայ) տի. րապետած աշխարհն՝ ընդ երկայնու. թիւն ունի 26 հազար ասպարէզ, եւ շատ ազգեր նուածուած են նորա իշխա. նութեան ներքն, ինչպէս կողքիք, տաւրիսացի Յոյնք, և այլ հիւսիսաբնակ բարբարոսք (Պրիմաբնակ Սկիւթացիք) . և նորա բարեկամ և դաշնակից են Սկիւթացիք և Տաւրիսացիք, Վաստարք և Թրակացիք, Սարմատացիք, և ասպ Դանայիս և Խսարէ գետոց և Ազախ ծո. վու ափանց վրայ բնակող բարբարոսք<sup>1</sup> . և յիրաւի, Պելնիդէսի զրուցածին հա. մածայն՝ այդ ազգութիւնք կը գտնուին յետոյ Միհրդատայ բանակին մէջ :

Պրիմեան երկրորդ մարտին պատճառ, ըստ արձանագրութեանս, Սկիւթացւոց ապստամբութիւնն է . որք լսելով՝ թէ Միհրդատ շարաշար յաղթուած է ՚ի Աթլայէ (86ին), յարմարաւոր միջոց կը գտնեն զայն Պոնտացւոյն լուծը թօ. թափելու, և յայտնի զլուխ ամբաւնա. լով քսան և վեց տարի առաջ ձեռքէ հանած բերդերը խավա և Նէապոլ

դարձեալ ձեռք կը բերեն. կը համսի պատամբութեան լուրզ Միհրդատայ. որ կը փութայ ՚ի յաղթողէն հաշտութիւն խնդրելու, ոչ ըստ ոմանց, հեռաւոր հիւսիսաբնակ Սկիւթացւոց աշխարհը խաղաղելու, այլ իրեն մերձաւոր Ղրիմը ձեռքէ չհանելու համար:

Հռովմայեցի Ալլա զօրավարին հետ խաղաղութեամբ քաշինք գնելով (84ն) նոյն աշնան կը զրկէ գարձեալ զիիովանդոս զօրավարը ՚ի Քերսոնիս, որ մէկ տարուան միջոց, ըստ վկայելոյ արձանագրութեանս, կը տիրէ ծովափնեայ բերդաքաղաքաց կիրիխնիտայ և կալուիմենին և վերսոնին երկու Սկիւթական ամրոցները խալվա և նէապօլ Միհրդատայ իշխանութեան ներքոյ կը նուածէ:

Այսպէս կը լմնայ Սկիւթական կամ Ղրիմեան երկրորդ պատերազմն ընդ. Սկիւթացիս, որում կը վկայէ, և ինքն Ապահիանոս զրելով, թէ Միհրդատ՝ յետ դաշնագրութեան ընդ Սիրլայի, Պոնտոս կը վերադառնայ և կը պատերազմի ապատամբ կողքաց և վոռփորեանց դէմ. յետնոցս համար կը պատրաստէ նաւատորմիդ և մեծ զօրք: Յայսնի կ'երեի որ Ապահիանոս այս պատերազմն երրորդին հետ շփոթ կ'երպով միայնարած է. որոց մասին որոշակի կը խօսի արձանագրութիւնս, որ և երկրորդէն վերջը շուտով եղած է, վոռփորեանց ապատամբութեան պատճառաւ:

Արդ արձանագրութեանս խօսքերէն կ'երեի՝ որ Դիոփանդոսի ձեռքէն փախրատական Սկիւթացիք Վոսփորի սահմանները ապաւինած են և և խորհուրդ՝ ՚ի մէջ առեալ խորհին զանձանց իւրեանց »: Դիոփանդոսի քայուելէն վերջը, ՚ի Սկիւթացւոց գրգռուելով Վոսփորեանք գլուխ կը վերցըննեն Միհրդատայ դէմ, և իրենց Գէրիսադ թագաւորը, որ կամաւ Միհրդատայ լուծին տակ

խոնարհել էր՝ գահընկէց ընելով, իրենք զիրենք անկախ հրատարակած են: Ապահիանոս կը դրէ՝ որ Միհրդատ նուածել է զվոսփոր Հռովմէական երկրորդ պատերազմէն վերջը. ուրեմն Դիոփանդոս վլոսափորեանս նուածելու համար նաւատորմի եկած է ՚ի Քերսոնիս 80ին, և տիրելով թէովոսիոյ, որ մասն էր Վոսփորեան թագաւորութեանն, և միանգամայն նուածելով զՊանտիկապէտ, որ մայրաքաղաք էր Վոսփորեանց, բոլորովին Տաւրիական թերակղին, հանդերձ Սկիւթական և Վոսփորեան թագաւորութիւններով Պոնտապայոն իշխանութեան ենթագրած է, և մինչեւ զործը այս աստիճանին բերելու համար, հարկաւոր եղած է Դիոփանդոսի զօրավարին Միհրդատայ Դ. երեք անգամ արշաւել՝ ՚ի Քերսոնիսէ, գարնան, ամառը և աշնան 80ին, ինչպէս կը պատմէ արձանագրութիւնս. որ զրուած է ՚ի չնորհակալութիւն Դիոփանդոսի 79ին, յանուարի 12ին: Յետ նուածելոյն Վոսփորի, Կ'աւելցընէ Ապահիանոս՝ թէ Միհրդատ իւր որդին ՎՄախտար թագաւորեցուց Վոսփորի վրայ:

Ստրաբոն կը դրէ՝ թէ Գէրիսադ բարբարոսաց գէմ անկարող գտնուելով, Միհրդատայ յանձն ըրաւ իւր տէրութիւնը: Երկու պատմագրաց ևս վկայութիւնն ատոյդ են. զի Ապահիանոս կը պատմէ Մախարի թագաւորելը՝ ՚ի Վոսփոր, Գէրիսադոյ՝ դաւադիրներէն գահնկէց լինելն և Դիոփանդոսի զնոսաւ նուածելէն վերջի դէպքը, մինչդեռ Ստրաբոն Սկիւթից պատերազմներէն առաջ Գէրիսադայ առ Միհրդատ դիմելոն դէպքը կը դրէ: Մէք ժամանակից դիպաց համեմատութենէն հետեցընելով կը զրոցելք՝ որ Վոսփորի նոր թագաւորութեան կամ հարստութեանս սկիզբն եղած է 79 տարի մեր թուականէն առաջ:

Հ. Փերովը Վ. Գուշերեաւ